ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«Ե. ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ
Գրականության և արվեստի թանգարան
REPUBLIC OF ARMENIA, MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE END SPORT
Y. CHARENTS MUSEUM OF LITERATURE AND ARTS NCSO

0010 Երևան, Արամի 1
Հեռ. 010 56 36 41
Էլ. փոստ litartmuseum@gmail.com

0010 Yerevan 10, Arami str. 1
Tel. 010 56 36 41
E-mail: litartmuseum@gmail.com

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Սյուզաննա Խոջամիրյան, ԳԱԹ տնօրեն

2. Գործուղման վայրը և ժամկետները

Ապրիլի 9-11-ը, Կիպրոսի Հանրապետություն

3. Հրավիրող կողմը

Կիպրոսի Լիմասոլ քաղաքի Ս. Գէորգ եկեղեցի

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Հայագիտական միջոցառման շրջանակում «Արևմտահայ Գործիչներու ժառանգութիւնը Գրականութեան եւ Արուեստի թանգարանի մէջ» խորագրով զեկույցը ներկայացնելու, ինչպես նաև ԳԱԹ-ի նոր հրատարակությունների՝ «Իմ սեր, Ավետիք», «Զահրատ. Կաղանդի տոպրակներ», «Գաբրիել Սունդուկյան-200» գրքերի շնորհանդեսները իրականացնելու նպատակով:

5. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցի շրջանակում Լիմասոլի սուրբ Գևորգ եկեղեցուն կից սրահում հանդես եկա «Արևմտահայ Գործիչներու ժառանգութիւնը Գրականութեան եւ Արուեստի թանգարանի մէջ» բանախոսությամբ: Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայում այցելեցի նշանավոր Միքայելյան վարժարան, Կիպրոսի Հայոց ազգային առաջնորդարանում հանդիպեցի Գերաշնորհ Տ. Կոմիտաս արք. Օհանեանին,

քննարկվեցին թանգարանի և հայ համայնքի հետ աշխատանքների շարունակականությունը:

6. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպում եղավ Նարեկ հայկական վարժարանի, Կիպրոսի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Լիմասոլի և Պաֆոսի հոգևոր հովիվ Գերապատիվ Տ. Հովհաննես Ծ. Վրդ. Սաղտըճեանն իր խոսքում կարևորեց Կիպրոսում այսօրինակ հանդիպումը, որի շնորհիվ համայնքի ներկայացուցիչները ծանոթացան ԳԱԹ-ի գործունեությանն ու հայաստանյան մշակութային կյանքի ներկա փուլին:

Ներկայացվեցին ԳԱԹ հրատարակչության վերջին տարվա ընթացքում տպագրված գրքերը, որին հաջորդեցին գրական ընթերցումներ:

Մշակութային և կրթական կառույցների հետ քննարկվեցին հետագա համագործակցությանն առնչվող հարցեր:

7. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկ եղավ Նիկոսիայի Մելգոնեան վարժարանի շենքում հետագայում ունենալու վարժարանի պատմությանը վերաբերող առանձին ցուցասրահ ԳԱԹ-ի նյութերի կրկնօրինակներով: Այս բովանդակությամբ առաջարկներ պետք է ուղարկվեն ՀԲԸՄ-ին, ստեղծվի աշխատանքային խումբ, ընտրվեն թեմատիկ նյութեր վարժարանն ավարտած արվեստագետների ու գիտնականների արխիվային ֆոնդերից, և դրանց կրկնօրինակներով կազմվի ցուցադրության հայեցակարգ:

8. Ստորագրությունը, ամսաթիվը

15.04.2026

Սյուզաննա Խոջամիրյան